


ՎՐԱՍՏԱՆ-ՉԻՆԱՍՏԱՆ

ՍԻ ՑԶԻՆՊԻՆ. «ՎՐԱՍՏԱՆԸ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՎԱՄՆ ՈՒ ԼԱՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է»

Հուլիսի 27-28-ը, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, Չինաստանի ժողովրդական Հանրապետության նախագահ Սի Ցզինպինի հրավերով, Համաշխարհային ամառային համալսարանական խաղերի բացման արարողությանը մասնակցելու համար, գտնվում էր Չինաստանում:



Այցի շրջանակներում Վրաստանի վարչապետը Չինաստանի նախագահի հետ հանդիպեց Սիջիուան նահանգի Չենգրու քաղաքում:

Հանդիպմանը վարչապետը Սի Ցզինպինին շնորհակալություն հայտնեց Չինաստան և Համաշխարհային ամառային համալսարանական խաղերի բացման արարողությանը հրավիրելու համար:

Վրաստանի և Չինաստանի ղեկավարների հանդիպմանը կողմերը պատրաստակամություն հայտարարեցին:

Նեցին առավել խորացնել Վրաստանի և Չինաստանի միջև երկկողմ համագործակցությունը: Հանդիպմանը Իրակլի Դարիբաշվիլին նշեց, որ (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՍՏԱՏՈՒԹՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱԿԼԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԵՐԱԽՏԱՊԱՐՑ Ե ԽՈՐՎԱԹԻԱՅԻ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ»

ՉԱԳՐԵՐՈՒՄ ԲԱՅՎԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԴԵՄՊԱՆԱՏՈՒՆ

Հուլիսի 24-25-ը պաշտոնական այցով Խորվաթիայում էր Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին:

Այցի շրջանակներում, Վրաստանի վարչապետը հանդիպում ունեցավ Խորվաթիայի վարչապետ Անդրեյ Դեկլանովիչի հետ, մասնակցեց Ջագրեբում Վրաստանի դեսպանատան բացման պաշտոնական արարողությանը:

Վրաստանի և Խորվաթիայի վարչապետների, ապա ընդլայնված կազմով բանակցություններին՝ Իրակլի Դարիբաշվիլին մանրամասնորեն խոսեց Վրաստանի կողմից Եվրահանձնաժողովի 12 հանձնարարականների կատարման մասին, նշելով, որ երկիրն արժանիորեն սպասում է տարեկան Եվրամիության թեկնածու երկրի կարգավիճակին: Սի-աժամանակ վարչապետը ընդգծեց, որ Վրաստանի համար հատկապես կարևոր է Եվրամիությանն անդամակցելու գործընթացում Խորվաթիայի փորձի փոխանակումը:




Իրակլի Դարիբաշվիլու խոսքով, Վրաստանը երախտապարտ է Խորվաթիայի ցուցաբերած աջակցության համար:

Իր հերթին, Խորվաթիայի վարչապետ Անդրեյ Դեկլանովիչը (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

«ՏԵՐՅԱՆԱԿԱՆ ՕՐ»՝ ԳԱՆՁԱՅՈՒՄ

ԳՆԴԼԻԿ ՍԱՐԻ ՓԵՇԻՆ 56-ՐԴ ԱՆԳԱՄ ԹԵՎԱԾԵՑ ՏԵՐՅԱՆԻ ՊՈՒԶԻԱՆ



Այդ օրը, հուլիսի 23-ին, բարձրագահ Արուստուհի Սարգսյանի նշանակման ամսաթիվն էր, վաղորդյան զեփյուռից մեղմ օրորվեցին դաշտերն ու հանդերը լուռ, ու արեւի առաջին շողի հետ մարդկային հոսքը ձգվեց ուխտատեղի դարձած Վահան Տերյանի ծննդավայր՝ Գանձա:

Շուրջ կես դար է բանաստեղծի ծննդավայրը դարձել է քնարական հանդիսությունների վայր: Գալիս են հարյուրավոր հյուրեր երկրի հեռու ու մոտ վայրերից, Հայաստանից, Ռուսաստանից, գրականության, մշակույթի գործիչներ, տարբեր ոլորտների ներկայացուցիչներ, նրա անխառն պոետիկ բազում երկրպագուներ, գալիս են հերթական անգամ անմահացնելու, գնահատելու նրա անձեռակերտ

քնարերգությունը: Հյուրընկալորեն իր դռներն է բացել պոետի հայրենական տունը: Այցելուները ակնածանքով, հուզմունքով ու մեծ հետաքրքրությամբ շրջում են տուն-թանգարանի վերանորոգված ցուցասրահում, հուշային մասի հնամյա սենյակներում: Հարակից տարածքում գտնվող Սուրբ Կարապետ եկեղեցուն մատուցված պատարագից եւ մոմավառությունից հետո, մարդկանց հոծ բազմությունն ու մեքենաների շարայունը ձգվում է դեպի գյուղամերձ Գնդլիկ սարի ստորոտ, ուր սովորաբար անցկացվում է արդեն ավանդույթ դարձած դաշտահանդեսը:

- Շնորհավորում են բոլորիդ այս գեղեցիկ տոնի կապակցությամբ: Արդեն 56-րդ անգամ Գանձայում հավաքվում են Տերյանական պոետիկայի երկրպագուներն ու գնահատողները: Տերյանն անսահման հայրենասեր էր, անմնացորդ սիրով էր սիրում իր հայրենիքը, Ջավախք աշխարհը եւ անչափ կարոտում: Եկեք մեր սերն ու խոնարհումը բերենք Վահան Տերյան մեծ հային, բանաստեղծին, հայրենիքի, եղբայրության եւ հավասարության երգչին,- հանդիսության բացման իր խոսքում ասաց Նիկոնիկոսյանի մունիցիպալիտետի քաղաքապետարանի մշակույթի, սպորտի, հուշարձանների պահպանության ծառայության պետ Լեւոն Վարդանյանը:

Հետո բեմահարթակը տրամադրվում է ելույթ ունեցողներին, ովքեր խոսք ունեն ասելու հանրությանը:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԵՎՐԱՆՏԵՎՐՈՒՄ

ԵՎՐԱՆՏԵՎՐՈՒՄԻ 12 ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԵՉՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՑՈՒՆԻՑ ԱՄԵՆ ԻՆՉ ԱՐՎԵԼ Է

«Վրացական երազանք» կուսակցության նախագահ Իրակլի Կոբախիձեն լրագրողների հետ հանդիպմանը նշեց, որ Եվրահանձնաժողովի 12 հանձնարարականների առնչությամբ այն ամենը, ինչ կարելի էր անել գործնական տեսանկյունից, արվել է խորհրդարանական մեծամասնության կողմից:

Նրա խոսքով հանձնարարականների կատարման ընթացքը քննարկվեց հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպմանը, որին մասնակցեցին նաեւ Եվրամիության դեսպանը եւ դիվանագիտական կորպուսը:

- 12 կետերի վերաբերյալ մեր դիրքորոշումը, գիտեք, մինչեւ հունիսի վերջ այն ամենը, ինչ հնարավոր էր անել գործնական տեսանկյունից, արվել է խորհրդարանական մեծամասնության, իշխող թիմի կողմից,- ասաց Իրակլի Կոբախիձեն:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ԴԵՄՊԱՆԸ ՀԱՆԳԻՊԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Հուլիսի 25-ին Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Շարվաշիձեն հանդիպում է ունեցել Հայաստանի պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի հետ:



Հանդիպմանը կողմերը քննարկել են Վրաստանի եւ Հայաստանի միջև հարաբերությունների աճող դինամիկան եւ համագործակցության խորացման հեռանկարները:

ԱՌՈՂՋԱՊԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՈՒՌՈՒՅՔԱՅԻՆ ՀԻՎԱՆԳՈՒԹՅԱՄԲ ԱՆՏՈՐՈՇՎԱԾ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ԲՈՒԺՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԸՆԳՈՒՆՈՒՄԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի վարչապետի նախաձեռնությամբ պետությունը ստանձնում է մինչեւ 18 տարեկան, ուռուցքային հիվանդությամբ ախտորոշված երեխաների արտասահմանում բուժման ծախսերը:

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի առողջապահության նախարարությունը, ի կատարումն վարչապետի նախաձեռնության, հուլիսի 27-ից մեկնարկել է արտասահմանում երեխաների բուժման հայտերի ընդունումը:

Վրաստանի առողջապահության առաջին փոխնախարար Թամար Գաբունիայի խոսքով, ուռուցքային հիվանդությամբ ախտորոշման դեպքում հիվանդ երեխաների բուժմանը (Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՌՈՐԵՐՏ ՍՏՈՒՐՈՒԱ - 85

ԾՆՈՒՆԳԳ ՇՆՈՐՀԱՎՈՐ, ՎԱՐՊԵՏ, ԳՈՒ ՈՒՂԵՅՈՒՅՅ ԵՍ ԲՈՒՆՈՐԻ ՉԱՍԱՐ...



Ծնունդը շնորհավոր, վարպետ: Գրառք եղավ, որ ծնվեցիր, ինչ լավ է, որ ծնվեցիր ու քո ծնունդով քեզ հետ բերեցիր թատերական նոր աշխարհ, մի առանձնահատուկ թատրոն, որը նման էր եւ ոչ մի թատրոնի: Նման չէ, ու դա քո թատրոնն է, քո երկիրը, քո աշխարհը, քո մտորումները: Ու դու ապրում ես այդ աշխարհում, որտեղ ապրել է ապրում են տաղանդավոր ստեղծագործողներ: Եվ նրանք թեւեւ սովեցիր, թիկունք դարձար, որ սավառեն աշխարհով մեկ եւ ասեն. «մենք Ստուրուայի աշխարհից ենք»: Ու հենց դրա համար մեր խոնարհումը քեզ, վարպետ: Աստված իմ, որտեղի՞ց քեզ այդքան մտքի, ոգու թռիչք: Դու երբեք չես շեղվում քո մեծ արվեստից, չես դավաճանում քո եւ մեր ճշմարիտ մտքերին եւ բարձրաձայն խոսքին: Դու ինչպե՞ս ես կարողանում ստեղծել վրաց նոր թատերական ճանապարհ, որը տանում է համաշխարհային թատերական արվեստի գագաթնակետ: Եվ դա միայն քո ստեղծած դժվարին, բայց եւ փառահեղ ճանապարհն է, որի նմանը չկա: Այդ ինչպե՞ս ես կարողանում հանճարեղ Շեքսպիրին ավելի հանճարեղ դարձնել, ինչպե՞ս ես կարողանում բեմի վրա հրաշքներ գործել, որոնք միշտ կմնան անկրկնելի: Ինչ

լավ է, որ ապրում ես մեր կողքին: Հազարավոր բեմադրիչներ ուզում են քայլել քո բացած ճանապարհով, փնտրում են հետքերը, որ մի քիչ էլ իրենցը դառնա, հետո սայթաքում ու կորչում են քո անբացատրելի, անկրկնելի ճանապարհի մեջ: Ծնունդը շնորհավոր, բարեկամս, հարազատս... Գիտես, ես այնքան հպարտ եմ, որ հնարավորություն ես տվել շփվել քեզ հետ: Դու այն ուղեցույցն ես, որ բոլորը գալիս են քո ետեւից, իսկ դու բոլորի համար կողքիդ տեղ ունես: Քո ստեղծած բեմադրությունները իրենց ձեռագիրն ունեն, որի տերը միայն ու միայն դու ես, տերն ես, բայց երբեք տիրող չեղար, այլ բաժանեցիր ու չասացիր, որ դա քոն է: Տաղանդդ այնքան շատ է, որ դրանից երբեք չես աղքատանում, ոճդ սփռում ես աշխարհով մեկ եւ աշխարհն ունի Ռոբերտ Ստուրուայի թատերական ձեռագիրը, մնայուն, անմահ ձեռագիր: Ծնունդը շնորհավոր, հանճարեղ մարդ: Քո ստեղծած բեմական կերպարները նման են քեզ, Համլետը դու ես, Լիրը դու ես, Պրոմեթեուսը դու ես, Ազգակը դու ես... Ափսոս, որ ոչ բոլորն են տեսել քո ստեղծագործելու պահը, երբ թախտոտ նստած ես ռեժիսորի աթոռին, երբ ժպտում ես ու մանկան նման թռչում դեպի բեմ, որը կենսագրություն է, որ դարձավ նաեւ արվեստի զնահատողների կենսագրությունը: Ծնունդը շնորհավոր, բարեկամս, քո նոր հաղթանակները դեռ առջեւում են, քեզ մահ չկա, դու քեզ անմահացրել ես:

ԱՐՄԵՆ ԲԱՅԱՆՊՈՒՅԱՆ Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար



ԻՍՐԱՅԵԼ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԴԱՏԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՈՒՋԻՆ ՕՐԻՆԱԳԻԾԸ

Իսրայելի խորհրդարանը երկրորդ եւ երրորդ ընթերցմամբ հաստատել է դատական բարեփոխումների շրջանակներում առաջին օրինագիծը, որը զանգվածային ցույցերի ալիք բարձրացրեց: Ընդդիմության 56 պատգամավորներ բողոքում են վերջին քվեարկությունը եւ հեռացել միասնական դիմումով: Փաստաթղթին կողմ է արտահայտվել 120-տեղանոց Քնեսեթի 64 պատգամավոր, որոնք ներկայացնում են իշխող կոալիցիան: Նշենք, որ օրինագծի շուրջ քվեարկությունից առաջ եւ դրա ընթացքում բազմաթիվ ցուցարարներ բողոքի ակցիաներ են իրականացրել: Կան ձերբակալվածներ:

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԶԻՆՇԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔՆ ԱՎԵԼԱՑՎՈՒՄ Է

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը օրենք է ստորագրել, որով հինգ տարով երկարաձգվում է սպայական կոչումից ցածր զինվորականների ծառայության ժամկետը: Բարձրաստիճան սպաների համար այս տարիքը 60-ից կհասցվի 65-ի: Կրտսեր սպաների համար՝ 55-ից 60 տարեկան, իսկ այլ կոչումների համար՝ 45-ից 55 տարեկան: Միաժամանակ, բարձրաստիճան սպաների համար զորահավաքային ռեզերվում սահմանված վերին շեմը կպահպանվի 70 տարին: Ավելացվում է նաեւ զինվորական զորակոչի վերին շեմը՝ 27-ի փոխարեն այն հասցվում է 30 տարուն: Նոր կանոններն ուժի մեջ կմտնեն 2024 թվականի հունվարի 1-ից եւ կգործեն մինչեւ 2028 թվականը՝ անցումային ժամանակաշրջանում:

ՀՈՒՍԱՍՏԱՆ ԳՐԱՆՑՎԵԼ Է ՌԵԿՈՐԴԱՅԻՆ՝ 46,4 ԱՍՏԻՃԱՆ ՇՈՉ

Հունաստանում գրանցվել է ռեկորդային՝ 46,4 աստիճան շոգ: Մասնավորապես, բարձր ջերմաստիճան է գրանցվել Պելոպոնեսի շրջանի Գիտեյո քաղաքում: Սա Հունաստանում 2006 թվականից ի վեր ամենաբարձր ջերմաստիճանի նոր ռեկորդ է: Հիշեցնենք, որ նախորդ շաբաթվա վերջին՝ կեսօրից հետո, Հունաստանում ջերմաստիճանը գերազանցել է 40 աստիճանը: Աթենքի Ակրոպոլիսը փակվել է շոգի պատճառով, դժբախտ պատահարները կանխելու համար:

ԻՍՊԱՆԻԱ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՂԹԵԼ ԵՆ ԸՆԴՈՒՄԱԳԻՐՆԵՐԸ

Իսպանիայում կայացած արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքներով ընդդիմադիր աջ կենտրոնամետ ժողովրդական կուսակցությունը զբաղեցնում է առաջին տեղը՝ ստանալով խորհրդարանում 350 մանդատից 136-ը: Այնուամենայնիվ, այս արդյունքներով կուսակցությունը չի կարողանա ինքնուրույն իշխող կոալիցիա կազմել, նույնիսկ, եթե միավորվի ծայրահեղ աջ Vox կուսակցության հետ, որը ստացել է 33 մանդատ: Այժմ երկրին սպասվում են կոալիցիա կազմելու շուրջ բարդ բանակցություններ, որոնց ելքը դեռ հնարավոր չէ կանխատեսել:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԻ ԳԱՐԻԲԱՇՎԻՒ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԵՐԱՆՏԱՊԱՐՏ Է ԽՈՐՎԱԹԻԱՅԻ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Պլենկովիչը հավաստիացրեց, որ Խորվաթիան կշարունակի աջակցել Վրաստանին բարեփոխումների ջանքերում եւ եվրամիությանն ու ՆԱՏՕ-ին միանալու հավակնություններին:

Առանձնագրույցին եւ ընդլայնված կազմով բանակցություններին կողմերն անդրադարձան երկու երկրների միջեւ տնտեսական կապերի ընդլայնման ու խորացման հեռանկարներին, ընդգծեցին էկոնոմիկայի տարբեր ոլորտներում համագործակցության ակտիվացման առկա

ներուժի առավել արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը: Կողմերը խոսեցին նաեւ ռուս-ուկրաինական պատերազմի պայմաններում ստեղծված իրավիճակի, գլոբալ մարտահրավերների եւ դրանց հաղթահարման ուղիների մասին:

ՎՐԱՍՏԱՆ-ՉԻՆԱՍՏԱՆ

ՍԻ ՑԶԻՆՊԻՆ. «ՎՐԱՍՏԱՆԸ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՎԱՄՆ ՈՒ ԼԱՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Վրաստանը գնահատում է Չինաստանի հետ երկարաժամկետ բարեկամությունն ու համագործակցությունը: Վարչապետը Սի Ցզինպինին շնորհակալություն հայտնեց «Գոտի եւ ճանապարհի համաշխարհային նախաձեռնության» համար:

մավարական գործընկերություն են հաստատում, այդպիսով մեր երկկողմ հարաբերությունները կտեղափոխվեն նոր մակարդակ: Չինաստանը եւ Վրաստանը պետք է միասին աշխատեն, որպեսզի այս նոր սկզբից խթան հաղորդեն մեր ռազմավարական գործընկերության ավելի լավ զարգացմանը, նպաստեն երկու երկրների տարբեր ոլորտների զարգացմանը եւ նպաստեն մարդկության բարօրությանը,- ասաց Չինաստանի նախագահը:

Վրաստանը բարձր է գնահատում Չինաստանի հետ բարեկամությունն ու գործընկերությունը, եւ ես շնորհակալ եմ մեր հարաբերությունները ռազմավարական գործընկերության վերածելու ձեր որոշման համար, որը, կարծում եմ, կոնկրետ արդյունքներ եւ օգուտներ կբերի երկու կողմերին: Թույլ տվեք կրկնել, որ Վրաստանը հավատարիմ է Չինաստանի հետ բազմաթիվ ուղղություններով առեւտրատնտեսական կապերի խորացման գաղափարին, եւ մենք ուրախ ենք, որ այս այցի շրջանակներում կարելու փաստաթղթեր կստորագրվեն: Եվս մեկ անգամ շատ շնորհակալ եմ,- ասաց Վրաստանի վարչապետը:

Հանդիպումից հետո Վրաստանի վարչապետը մասնակցեց Չինաստանի ժողովրդական Հանրապետության նախագահ Սի Ցզինպինի անունից կազմակերպված ընդունելությանը:

ՕՐԵՆՄԱՐԱԿԱՆ

ԱՐՄՈՒԿԻ ՆՈՐՄԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՏՈՒԳԱՆՔՆԵՐՆ ԱՎԵԼԱՑՎՈՒՄ ԵՆ



Հուլիսի 27-ին Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն հայտարարեց, որ Թբիլիսիի քաղաքապետարանը համապատասխան օրինագիծ է մշակել՝ աղմուկի նորմերի խախտման համար տուգանքի չափն ավելացնելու նպատակով, որն առաջիկայում կներկայացվի Վրաստանի խորհրդարան:

Սրճարաններում, բարերում, ռեստորաններում, ակումբներում եւ այլ օբյեկտներում աղմուկի թույլատրելի մակարդակը ցերեկային եւ գիշերային ժամերին հավասարապես սահմանափակ է եւ չպետք է գերազանցի 50 դեցիբելը, սակայն երբեմն խախտում են այս օրենքը,- մշել է Կախա Կալաձեն եւ հավելել, որ օրինագիծով առաջին դեպքում ակուստիկ աղմուկի թույլատրելի նորմերի գերազանցման համար՝ ֆիզիկական անձը կտուգանվի 150 լարիի չափով, իսկ իրավաբանական անձը՝ 1500 լարիի: Նույն գործողությունը կրկնելու դեպքում ֆիզիկական անձը կտուգանվի 500 լարիի, իսկ իրավաբանական անձը՝ 5000 լարիի չափով: Երրորդ եւ դրան հաջորդած բոլոր խախտումների համար՝ ֆիզիկական անձը կտուգանվի 1000 լարիի չափով, իսկ իրավաբանական անձը՝ 10 հազար լարիի: Ինչպես հայտարարեց Թբիլիսիի

քաղաքապետը, օրինագծի առնչությամբ արդեն խորհրդակցություններ են անցկացվել Վրաստանի խորհրդարանականների հետ: Հիշեցնենք, որ գործող օրենսդրության համաձայն՝ ֆիզիկական/իրավաբանական անձը առաջին անգամ զուգացվում է աղմուկի թույլատրելի նորմերը գերազանցելու դեպքում: Նույն արարքը երկրորդ անգամ կատարելուց հետո, 1 տարվա ընթացքում, ֆիզիկական անձը տուգանվում է 150 լարիի չափով, իսկ իրավաբանական անձը՝ 500 լարիի: Սեկտորալ ընթացքում երրորդ անգամ իրավախախտում կատարելու եւ յուրաքանչյուր հաջորդ նման արարքի համար՝ ֆիզիկական անձը տուգանվում է 300 լարիի չափով, իսկ իրավաբանական անձը՝ 1000 լարիի:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԵՒ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԱՌՈՂՋԱՊԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵԿՆԱՐԿԵԼ Ե ՌԻՈՒՅՔԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՐ ՍԽՏՈՐՈՇՎԱԾ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ԲՈՒԺՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Խաները կլինիկաներին կբաշխվեն՝ Ելեմով Գրանց անհատական կարիքներից, կլինիկայի հնարավորություններից եւ հիվանդի ընտանիքի ընտրությունից:

- Ընտրված բժշկական հաստատությունները լավագույն կլինիկաներն են Թուրքիայի («Անադոլի բժշկական կենտրոն»), Իսպանիայի («Յիբոն Սալուդ բժշկական կենտրոն») եւ Իսրայելի («Թել Ավիվի Իսիլուդ բժշկական կենտրոն») մասնական ուղուցքաբանության ոլորտում: Վրաստանում նախնական ավտորոշումից հետո, Գրանց հնարավորություն կունենան ստանալ ամբողջական փաթեթ,- հայտարարեց Թամար Գաբունիան:

- Երեխայի ծնողներն ու բուժող բժիշկները կներգրավվեն գործընթացին՝ հասկանալու համար, թե որ կլինիկան է օպտիմալ բուժումը արտերկրում շարունակելու: Դա կախված է նրանից, թե երեխային, ինչ ծառայություն է պետք: Քանի որ որոշ կլինիկաներ առաջարկում են մասնագիտացված քիմիաթերապիա, պրոտոնային թերապիա, ուստի, այս գործոնները նույնպես հաշվի կառնվեն,- ասաց Թամար Գաբունիան եւ հավելեց, որ մինչ մանկական ուղուցքաբանության պետա-

կան կենտրոնի բացումը, որը հագեցած է ժամանակակից բարձր տեխնոլոգիական սարքավորումներով, արտերկրում բուժման ծրագիրը Վրաստանում անցումային փուլ է:

- Գործընթացում վրացական կլինիկաների դերը հսկայական է: Առաջին հերթին ավտորոշումը կկատարվի Վրաստանում: Եթե որեւէ բան վիճելի կամ կասկածելի է, այն կստուգվի վրացի փորձագետների կողմից ընդունող կլինիկայում, որտեղ պետք է ուղարկեն երեխային: Հոսպիտալացման փուլի ավարտից հետո, երբ երեխան դուրս գրվի կլինիկայից, եւ նա պետք է վերադառնա երկիր, նրան կհսկի Վրաստանի կլինիկայի ուղուցքաբանը, ով, ի սկզբանե, զմահատել է նրա վիճակը: Եթե անհրաժեշտ է երեխայի կրկնակի այցը արտերկիր, ապա բժիշկը պետք է ժամանակին որոշում կայացնի այդ մասին: Այսպիսով, երեխան կունենա հսկիչ ինչպես տանը, այնպես էլ արտասահմանյան կլինիկայում,- ընդգծեց Թամար Գաբունիան:



ՑՈՐԵՆԻ ՆԵՐԿՐՈՒՄԸ ԱՎԵԼԱՑԵԼ Ե, ԱԼՅՈՒՐԻՆԸ՝ ՆՎԱՋԵԼ

Վրաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, ցորենի ներկրումը Վրաստան ավելացել է, իսկ այլուրի ներկրումը՝ նվազել:

Հունիսին Վրաստանը գնել է 2,5 մլն ԱՄՆ դոլարի 9887 տոննա ցորեն, իսկ նախորդ տարվա նույն ամսին ներկրվել է 2,1 մլն ԱՄՆ դոլարի 5671 տոննա ցորեն:

Ինչ վերաբերում է այլուրին, որի վրա անցյալ ամիս հարկ է սահմանվել, ներկրումը նվազել է: Հունիսին Վրաստանը գնել է 13,953 տոննա այլուր՝ 3,5 մլն ԱՄՆ դոլարի, իսկ 2022 թվականի հունիսին՝ 15,076 տոննա ցորեն՝ 6,5 մլն ԱՄՆ դոլարի:

Երկու ապրանքների հիմնական ներկրողը Վրաստան, Ռուսաստանն է:

Նշենք, որ այլուրի ներկրման ցուցանիշի նվազման պատճառով Վրաստան ներկրվող այլուրի վրա սահմանված հարկի մասին դրույթն է, որը ուժի մեջ է մտել հունիսի 12-ից:

ԱՅՑԵՐԻ ԹՎՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՌԱՋԱՏԱՐՆ Ե

Վրաստանի զբոսաշրջության վարչության տվյալներով՝ 2023 թվականի առաջին վեց ամիսներին Վրաստան 2 միլիոն 529 հազար 517 միջազգային այցելություն է կատարվել, ինչը գրեթե 76 տոկոսով ավելի է նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ եւ 21 տոկոսով պակաս՝ 2019 թվականի ցուցանիշից: Առաջին վեց ամսում Վրաստան կատարած ամենաշատ այցելությունների եռյակում է նաեւ Հայաստանը: Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ առաջին եւ երկրորդ եռամսյակում Թուրքիան առաջատարն է միջազգային այցելությունների քանակով՝ 58 հազար 527 այցելություն:

Երկրորդ տեղում Ռուսաստանն է, որտեղից Վրաստան է կատարվել 577 հազար 632 այցելություն: Երրորդ տեղը զբաղեցնում է Հայաստանը՝ 397 հազար 116 այցելությամբ. աճը կազմում է 103 տոկոս, իսկ 2019 թվականի համեմատ՝ 25,2 տոկոսով պակաս: Չորրորդ տեղում Իսրայելն է, իսկ հինգերորդ տեղը զբաղեցնում է Ադրբեյջանը:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈՒՆԱԿԱՄԱՆ ԿՈՒՐՍԸ (28 հունիսի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը:

Տարադրամ	Լարի
1 ԱՄՆ ԴՈԼԱՐ	2.6491
1 ԵՎՐՈ	2.9516
100 ՌՈՒՐԼԻ	2.9456
1000 ԴՐԱՄ	6.8473

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՎԵՑ ԱՄՍՈՒՄ ԲԱՑԱՐԱՅՏՎԵԼ Ե ԱՆՏԱՌԱՆՅՈՒԹ ԼՊՕՐԻՆԻ ՓՈՒՆԱԴՐՄԱՆ 88 ՓԱՍՏ

Ընթացիկ տարվա հունվար-հունիս ամիսներին, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիտորինգի դեպարտամենտի աշխատա-

կիցները, ապրանքի վերահսկման շրջանակներում, երկրի ծավալով անցկացված միջոցառումների արդյունքում, բացահայտել են ավելի քան 399 խորանարդ մետր անտառանյութ-

թի առանց ապրանքագրերի փոխադրման 88 փաստ:

Իրավախախտումն թույլ տված անձանցից ապօրինի անտառանյութը բռնագրավվել է:

ԿԱՆԽՎԵԼ Ե ՂԱԶԲԵԳԻ, ԹԲԻԼԻՍԻ ԵՎ ՔՈՒԹԱՅԻՍԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱԿԱԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ ԶՂՈՉԱԿԱԳՐՎԱԾ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԳՈՒՄԱՐԻ ՆԵՐԿՐՄԱՆ ԴԵՊԸ



Ղազբեգի, Թբիլիսիի եւ Քութայիսիի օդանավակայանների մաքսային անցակետերում, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության աշխատակիցները, կասկածի հիման վրա, խուզարկել են տարբեր երկրների քաղաքացիներին պատկանող ծանրոցները:

քի 169 հողվածի երրորդ մասի համաձայն՝ իրավախախտումն թույլ տված Վրաստանի Բելառուսի քաղաքացիները տուգանվել են 27595,722 լարիով, իսկ նույն հողվածի երրորդ մասի համաձայն՝ օրինախախտումն թույլ տված Ռուսաստանի քաղաքացուն՝ որպես պատժամիջոց սահմանվեց չհռչակագրված ապրանքի բռնագանձում:

Արդյունքում հայտնաբերվել է չհռչակագրված 122300 ԱՄՆ դոլար, 5680000 ռուսական ռուբլի, 2407000 հայկական դրամ եւ 11775 լարի: Չհռչակագրված

գումարի ընդհանուր արժեքը ազգային բանկի փոխանակման կուրսով կազմում է 507646,96 լարի: Վրաստանի մաքսային օրենսգրք-

ՎԵՑ ԱՄՍՈՒՄ ԹՈՒՅԼ Ե ՏՐԿԵԼ ՆԱՎԹԱՄԹԵՐՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՓՈՒՆԱԴՐՄԱՆ ԵՎ ՊԱՅՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԻ ԽԱՒՏՄԱՆ ՎԵՑ ՓԱՍՏ

Ընթացիկ տարվա հունվար-հունիս ամիսների տվյալներով, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիտորինգի դեպարտամենտի աշխատակիցները, երկրի ծավալով անցկացրած վերահսկիչ միջոցառումների արդյունքում, հայտնաբերեցին 22588 լիտր չհայտագրված վառելանյութի (դիզելի) պահպանման փոխադրման եւ իրացման կարգի խախտման վեց դեպք:

հողվածի համաձայն՝ իրավախախտումն թույլ տված անձանց համար սահմանվեց վարչական պատժամիջոց, գործը քննության համար առաքվել է դատական մարմիններին:



ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾԱՆԵՐՁԱՆ

ԱՆԱԼՔԱԼՔԻ. ԾԱՆԱԴԱՐՅԱՇԻՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ՝ ԱՐՈՒԼ-ԿԱՐՏԻԿԱՄ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Ախալքալաքիի մունիցիպալիտետի Արուլ-Կարտիկան ճանապարհի վերականգնման աշխատանքները շարունակվում են:

Նշված հատվածում կառուցվում է երկաթբետոնե ճանապարհ, եւ գյուղացիները շուտով կկարողանան տեղաշարժվել առանց արգելքների: Ծանապարհի 4048 մետրանոց հատվածում կառուցվում է երկաթբետոնե ծածկ:

Ծրագիրը ֆինանսավորվում է տարածաշրջանների զարգացման հիմնադրամից եւ տեղական բյուջեից, իսկ արժեքը կազմում է 1 165 024 լարի:



քաղաքապետարանում, «Կանանց հզորացում եւ էական ներդրավածություն տեղական ինքնակառավարման գործունեության մեջ» նախագծի շրջանակներում, անցկացվեց հանդիպում, որի աշխատանքին մասնակցեցին Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանը, մունիցիպալիտետի քաղաքապետարանի մշակույթի, կրթության, սպորտի, հուշարձանների պահպանության, երիտասարդների հարցերի եւ տուրիզմի զարգացման ծառայության աշխատակիցները, նախագծով հետաքրքրված կանայք՝ Նինոծմինդայի մունիցիպալի-

տետի վարչական միավորներից: Նախագիծն իրականացվում է Եվրամիության ֆինանսավորմամբ եւ HEKS-EPER Georgia-ի աջակցությամբ:

ԲՈՐԺՈՍԻ. ՄՈԼԻԹ-ՏԱԲԱԾՂՈՒՐԻ ՏԱՆՈՂ ԾԱՆԱԴԱՐՅԸ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԵՑ

Ինչպես «Վրաստանին» տեղեկացրին Բորժոմիի մունիցիպալիտետի քաղաքապետարանից, Տաբածղուրի լիճի ավազանի բարձրալեռ Մոլիթ գյուղը Տաբածղուրի գյուղի հետ կապող ճանապարհի վերականգնման ավարտվեց:

Ծրագրի շրջանակներում՝ ճանապարհի 2,2 կմ հատվածում անցկացվեց երկշերտ ասֆալտբետոնե ծածկ: Ծանապարհների վերականգնման աշխատանքները համաֆինանսավորվեցին Լեռնային հիմնադրամի եւ տեղական բյուջեի միջոցներով:

Հիշեցնենք, որ երկու տարի առաջ վերանորոգումից հետո շահագործման հանձնվեց Ախալքալաքիի մունիցիպալիտետի Բեժանոյից Բորժոմիի մունիցիպալիտետի Չքարուլա-Բալանթա-Մոլիթ գյուղեր տանող ճանապարհը:

Էջը պատրաստեց ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՆԻՆՈՇՄԻՆՂԱ. ԿԱՆԱՆՑ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Հունիսի 25-ին, Նինոծմինդայի մունիցիպալիտետի

ԱՄՍՈՒՅԻՆ ՀԱՆԳԻՍ

ՏՆՏԵՍԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՆՉԱՍ ՀԱՆԳՍԱՎԱՅՐՈՒՄ ՄԵՎ ՄԱՐԴՈՒ ԱՌՈՐՅԱ ԾԱԽՍԸ ԿԿԱԶՄԻ 150 ԼԱՐԻ

Տարեցտարի հանգստավայրերում հանգստացողների ծախսերը աղետալի ավելանում են: Արդյունքում, տարեցտարի նվազում է հանգստավայրերում հանգստացողների թիվը:

Օրինակ, ընտանեկան հյուրանոցներում առօրյա ծախսը, մեկ մարդու հաշվով, կազմում է 150 լարի, մեկ շաբաթվա համար նախատեսված գումարը գերազանցում է հազար լարին, իսկ ընտանիքի դեպքում այդ գումարը հասնում է 3 հազարի: Գները շատ անհամեմատ բարձր են լեռնային հանգստավայրերում: Ծովային հանգստավայրերում, չնայած հնչում են զբոսաշրջիկների նվազ քանակության կապակցությամբ բողոքներ, գները նվազելու փոխարեն՝ ավելանում են:

Վերոնշյալ պայմաններում առանձնակի տուժում են երեխաներ ունեցող ընտանիքները: Նրանց առօրյա ծախսերը, երեխայի սննդի ու ժամանցի հաշվառմամբ, գերազանցում է 300 լարին:

- Անցյալ տարի կնոջս ու երկու երեխաների հետ ծովափնյա մեկ շաբաթյա հանգստի համար ծախսեցինք 2500 լարի, այս տարի՝ նույն հանգստավայրում անցկացրած մեկ շաբաթվա գումարը գերազանցեց 4 հազար լարին,- մեզ հետ գրույցում ասաց Քոբուլեթիի հանգստավայրում իր ամառային արձակուրդն անցկացնող թբիլիսցի Գիրոզին:

- Հիվանդ երեխայիս բժիշկները խորհուրդ են տվել ամառն անցկացնել լեռնային հանգստավայրում: Բակուրիանիում մասնավոր տանը սենյակ վարձեցինք, ընտանիքով տեղավորվեցինք այդտեղ: Ամեն

նախստ տնտեսման պայմաններում անգամ սենյակի վարձի հետ միասին, մեկ շաբաթում ծախսեցինք ողջ տարվա ընթացքում տնտեսած գումարը՝ 4 հազար լարին,- ասաց բոլնիսցի Մ.Տ.-ն:

Հատկանշական է, որ գների բարձրացումից բողոքում են նաև տեղացիները: Նրանց խոսքով, եթե նախորդ տարիներին թե՛ մասնավոր բնակավայրերում, թե՛ ընտանեկան հյուրանոցներում հաճախորդների հերթ էր, ապա այս տարի սենյակների նշանակալի մասը դատարկ էր:

- Ստիպված ենք գինը ավելացնել, քանի որ ամեն ինչ թանկացել է, թեպետ, մյուս կողմից կորցնում ենք հաճախորդներին: Օրինակ, այս տարի մինչ օրս իմ ընտանեկան հյուրանոցում համարներ են զբաղեցրել նախորդ տարիներից ինձ ծանոթ հաճախորդները: Եկել են շատ ավելի կարճ ժամանակով, խուսափելով լրացուցիչ ծախսեր կատարելուց,- ասաց Բակուրիանիում գտնվող ընտանեկան հյուրանոցի սեփականատեր Արմենը:

Իրավիճակը շատ ավելի մտահոգիչ է բրենդային հյուրանոցներում, որտեղ հաճախորդների առօրյա ծախսը գերազանցում է 300 լարին: Այդ հյուրանոցի տերերն էլ բողոքում են հաճախորդների նվազ քանակից, նշելով, որ նախորդ տարիներին իրենց բիզնեսը շատ ավելի արդյունավետ էր:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ, ԹԵ ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ՄԵՐԺԵԼ ԱՌԱՆՁԻՆ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ԵՐԿԻՐ



Վրաստանի անվտանգության ծառայությունը հաստատել է առանձին երկրների հարյուրավոր քաղաքացիների Վրաստան մուտքը արգելելու վերաբերյալ տեղեկատվությունը:

Անվտանգության ծառայությունը նշել է մերժման պատճառները՝ բռնազավթման մասին Վրաստանի օրենսդրության խախտում (այցելությունը Աբխազիա եւ Ցխինվալիի տարածաշրջան), գործընկեր երկրներից ստացված տեղեկատվություն-նախազգուշացում, սադրիչ գործողությունների ծրագրման վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն, Վրաստանի շահերին վնասող հայ-

տարարությունների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն:

Իր պարզաբանման մեջ Անվտանգության ծառայությունը չի հստակեցնում «սադրիչ գործողություններ» եւ «վտանգավոր հայտարարություններ» հասկացությունները: Ենթադրվում է, որ դրանց տակ նախատեսված են Ռուսաստանի ընդդիմադիր ակտիվիստները եւ լրագրողները, ովքեր մնան պատճառաբանություններով չեն կարող մուտք գործել Վրաստան:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՀԱՐԿ՝ ՎՐԱՍՏԱՆՈ՞ՒՄ

Զբոսաշրջության ինստիտուտի գործադիր տնօրեն Մամուկա Բերձեմիշվիլին հանդես եկավ նախաձեռնությանը, ըստ որի՝ հյուրանոցում ապրելու յուրաքանչյուր օրվա համար օտարերկրյա զբոսաշրջիկներից, պետք է զանձել 1 լարիի հարկ:

Նախաձեռնության համաձայն՝ այդ հարկը կհամարվի տեղական մուտքիցիպալիտետների բյուջե:

Բաթումիի եւ Քոբուլեթիի հյուրանոցների ներկայացուցիչների շրջանում անցկացված հարց-

ման արդյունքներով՝ 52 տոկոսը ողջունել է նախաձեռնությունը, գտնելով, որ այն դրական ազդեցություն կզգործի զբոսաշրջության կայուն զարգացմանը: Մամուկա Բեր-

ձեմիշվիլու հաշվարկներով, եթե այս տարի այդ նախաձեռնությունը կիրարկվեր, ապա մուտքիցիպալիտետի բյուջեն Բաթումիում լրացուցիչ կստանար 4-6 միլիոն լարիի գումար:

Նշենք, որ զբոսաշրջության ինստիտուտը իր նոր նախաձեռնությունն արդեն մշակել է ներկայացրել է հանրությանը: Այն ներկայացվելու է խորհրդարանի քննարկմանը:

ՄՈՑԻԱԼԱԿԱՆ

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ԳՆԱՃԸ, ԿԵՆՍԱԿԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԸ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐՏԱԳԱՂԹԸ

Ստորել ձեռ ուշադրությանն ենք ներկայացնում Վրաստանի ազգային վիճակագրական ծառայության ընթացիկ տարվա անցած ժամանակահատվածում Վրաստանում գնաճի, բնակչության թվաքանակի ավելացման, կենսական նվազագույնի մեծության եւ Վրաստանից արտագաղթի ծավալների վերաբերյալ տեղեկատվությունները:

ՏԱՐՎԱ ԿՏՐՎԱԾՔՈՎ ԳՆԱՃԸ ԿԱԶՄԵԼ Է 0,6 ՏՈՒՍՈՒ

Վրաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, 2023 թվականի հունիսին, նախորդ ամսվա համեմատ, Վրաստանում գնաճը կազմել է -0,7 տոկոս, իսկ տարեկան գնաճը՝ 0,6 տոկոս:

Ինչ վերաբերում է բազային գնաճին, ապա, ըստ վիճակագրության ծառայության, 2023 թվականի հունիսին, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ, այս ցուցանիշը կազմել է 4,1 տոկոս, իսկ առանց ծխախոտի տարեկան բազային գնաճը սահմանվել է 4,0 տոկոս:

Ամսական գնաճի ինդեքսի ձեւավորման վրա հիմնականում ազդել են պարենային եւ ոչ պակասակալիս խմիչքների գների փոփոխությունները (գները նվազել են 3,2 տոկոսով), բանջարեղեն եւ այգեգործական բանջարեղեն (-19,1 տոկոս), ձեթ եւ ճարպ (-4,9 տոկոս), հաց եւ հացաբուլկեղեն (-2,7 տոկոս), կաթ, պանիր եւ ձու (-1,6 տոկոս), միս եւ միս ենթախմբերի գները նվազել են (-0,6 տոկոս): Բացի այդ, ձկան գներն աճել են (3,3 տոկոս):

Տրանսպորտի գներն աճել են 1,5 տոկոսով, ինչն ընդհանուր ցուցանիշին նպաստել է 0,17 տոկոսային կետով: Անձնական տրանսպորտային միջոցների շահագործման (2,0 տոկոս) եւ տրանսպորտային ծառայությունների (0,8 տոկոս) գներն աճել են:

Կոմունալ ծախսերի (ջուր, էլեկտրաէներգիա, գազ) ոլորտում արձանագրվել է գների 0,8 տոկոս աճ, որն արտացոլել է ամսվա գնաճը 0,08 տոկոսային կետով: Գներն աճել են հետեւյալ ենթախմբերի համար՝ բնակարանների ընթացիկ սպասարկում եւ վերանորոգում (7,0 տոկոս) եւ բնակարանների փաստացի հարկ (1,3 տոկոս):

ԱՐՉԱՆԱԳՐՎԵԼ Է ԿԵՆՍԱԿԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ԱՃ

Վրաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, Վրաստանում 2023 թվականի հունիսին, մայիս ամսվա համեմատ, կենսապահովման նվազագույնը աճել է 80 թեթիով:

Հունիսին աշխատունակ տարիքի տղամարդու կենսապահովման նվազագույնը կազմել է 254,5 լարի: Մինչդեռ 2023 թվականի մայիսին այս ցուցանիշը կազմում էր 253,7 լարի:

Նշենք, որ կենսապահովման մակարդակը սահմանվում է նվազագույն պարենային զանրազան հիման վրա: Նվազագույն պարենային զանրազան պարենային ապրանքների սահմանված նորմատիվ զանրազան է, որը պարունակում է աշխատունակ տարիքի մարդու բնականոն կյանքի եւ աշխատունակության համար ֆիզիոլոգիապես անհրաժեշտ սննդի քանակը:

ԵՐԿՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՃԵԼ Է...

Վրաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով՝ 2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ Վրաստանի բնակչությունը կազմել է 3736,4 հազար մարդ, ինչը 1,3 տոկոսով ավելի է նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատ: Նշենք, որ 2022 թվականին արձանագրվել է բացասական բնական աճ՝ 6799 եւ դրական միգրացիոն մնացորդ՝ 54509:

Ըստ վիճակագրական ծառայության՝ 2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ Վրաստանի բնակչության 60,4 տոկոսն ապրում է քաղաքային բնակավայրերում: Բացի այդ, թբիլիսիի բնակչությունը կազմում է ընդհանուր բնակչության գրեթե մեկ երրորդը: 0-14 տարեկան բնակչության տեսակարար կշիռը ողջ բնակչության մեջ 20,7 տոկոս է, աշխատունակ բնակչության տեսակարար կշիռը, որը ներկայացնում է 15-64 տարիքային խումբը, 63,8 տոկոս է, իսկ 65 եւ բարձր տարիքի բնակչության տեսակարար կշիռը կազմում է 15,6 տոկոս:

2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ տղամարդկանց թիվը կազմել է 1793,8 հազար, իսկ կանանցը՝ 1942,5 հազար: Բացի այդ, Վրաստանի բնակչության 48 տոկոսը տղամարդիկ են, իսկ 52 տոկոսը՝ կանայք: Սեռերի հարաբերակցությունը 92 է, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր 100 կնոջը բաժին է ընկնում 92 տղամարդ: Նշենք, որ մինչեւ 35 տարեկան տղամարդկանց թիվը գերազանցում է կանանց թիվը, իսկ 35 տարեկանից հետո հակառակ պատկերն է նկատվում, ինչը պայմանավորված է տղամարդկանց համեմատ կանանց կյանքի տևողությամբ:

2021 թվականի համեմատ՝ 2022 թվականին կյանքի տևողությունն աճել է 2,3 միավորով եւ կազմել 73,7 տարի, այդ թվում՝ տղամարդկանց համար՝

69,4, իսկ կանանցը՝ 78,1 տարի:

...ԱՃԵԼ Է ՆԱԵՎ ՎՐԱՍՏԱՆԻՑ ԳՆԱՑԱԾ ԵՎ ԶՎԵՐԱԴԱՐՉԱԾՆԵՐԻ ՈՒ...

Վրաստանի խորհրդարանի «Եվրոօպտիմիստներ» քաղաքական խմբի տեղեկություններով, 2012-2022 թվականներին արտերկիր մեկնած Վրաստանի շուրջ 245 հազար քաղաքացի չի դարձել:

Հիմնվելով Վրաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալների վրա «Եվրոօպտիմիստներ»-ը պատրաստել են «Միգրացիան Վրաստանում՝ ժողովրդագրական աղետի եզրին գտնվող երկիր» զեկույցը, ըստ որի՝ 2021-2022 թվականներին Վրաստանից մեկնել է 181 հազար 153 քաղաքացի, դարձել՝ 93 հազար 931 քաղաքացի: Ըստ այդմ՝ նշված տարիներին արտերկրում է մնացել Վրաստանի 87 հազար 222 քաղաքացի:

Ինչ վերաբերում է 2012-ից 2022 թվականների տվյալներին, ապա, ըստ քաղաքական խմբի՝ այս ընթացքում երկիրը լքել են չի դարձել Վրաստանի 244 հազար 966 քաղաքացի:

2012-2022 թվականներին երկիր է մուտք գործել եւ մնացել ավելի քան 225 հազար օտարերկրյա քաղաքացի: Նույն ժամանակահատվածում Վրաստան է ժամանել եւ երկիրը չի լքել Ռուսաստանի 93 հազար 872 քաղաքացի:

...ՆՊԱՍՏԱՌՈՒՄՆԵՐԻ ԹԻՎԸ

Վրաստանի սոցիալական ծառայությունների գործակալության տվյալներով՝ Վրաստանում մինչեւ 16 տարեկան 230 հազար 865 երեխա՝ 200 լարի կենսապահովման նպաստ է ստանում: Վերոնշյալ թիվը կազմում է այս տարիքի երեխաների 28 տոկոսից ավելին: Ստացվում է, որ մինչեւ 16 տարեկան յուրաքանչյուր չորրորդ երեխան ստանում է ապրուստի նպաստ:

Նշենք, որ բացի 200 լարիի օգնությունից, որը, ըստ վերջին տվյալների, տրվել է 230 հազար 865 երեխայի, երկրում սոցիալական օգնություն է ստանում 660 հազար 265 մարդ: Նրանցից 186 հազար 256-ն ընդգրկված է հանրային զբաղվածության խթանման պետական ծրագրում:

Սոցիալական ծառայությունների գործակալության տվյալներով՝ ընտանիքների մեկ երրորդը՝ 35 տոկոսը, զրանցված է սոցիալական աջակցության ծրագրի բազայում: